ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 12 » մարտ 2024թ. No 1322 - Ա

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ «ԱՎՎԱ ՌՈՒՍ» ԲԸ, ԿԻՐՈՎԻ ՇՐՋԱՆ, Ք. ԿԻՐՈՎ, ԼՈՒԳԱՆՍԿԱՅԱ Փ., 53Ա ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՏՕՕ «ԱՎՎԱ ՂԱԶԱԽՍՏԱՆ», 050008, Ք. ԱԼՄԱԹԻ, ԱԼՄԱԼԻ ՇՐՋԱՆ, ԱԲԱՅԱ Պ., 109Բ, ՍԵՆՅԱԿ 501, ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» «ՄՈՏՈՆԻՈՒՄ ԱՎՎԱ ՌՈՒՍ ԴՈՄՊԵՐԻԴՈՆ ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 10ՄԳ; (30/3X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ *ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՈՒՄ ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ* ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 7-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետը և ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 64-րդ կետի դ ենթակետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության փորձաքննության 12.03.2024 թվականի N 01/1204-24 բացասական եզրակացությունը՝ Ռուսաստանի «ԱՎՎԱ ՌՈՒՍ» ԲԸ, Կիրովի շրջան, ք. Կիրով, Լուգանսկայա փ., 53Ա ընկերության արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ « ՏՕՕ «ԱՎՎԱ ՂԱԶԱԽՍՏԱՆ», 050008, ք. Ալմաթի, Ալմալի շրջան, Աբայա պ., 109Բ, սենյակ 501, Ղազախստանի Հանրապետություն» «Մոտոնիում ԱՎՎԱ ՌՈՒՍ դոմպերիդոն դեղահատեր թաղանթապատ 10մգ; (30/3x10/) բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 21941 (004159) առ 23.02.2024թ. բացասական եզրակացությունը, որի համաձայն ներկայացված են թերի կամ ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տվյալներ կամ փաստաթղթեր («Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 7-րդ կետ և

ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 64-րդ կետի դ ենթակետ):

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Ռուսաստանի «ԱՎՎԱ ՌՈՒՍ» ԲԸ, Կիրովի շրջան, ք. Կիրով, Լուգանսկայա փ., 53Ա» ընկերության արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝« ՏՕՕ «ԱՎՎԱ ՂԱԶԱԽՍՏԱՆ», 050008, ք. Ալմաթի, Ալմալի շրջան, Աբայա պ., 109Բ, սենյակ 501, Ղազախստանի Հանրապետություն» «Մոտոնիում ԱՎՎԱ ՌՈՒՍ դոմպերիդոն դեղահատեր թաղանթապատ 10մգ; (30/3x10/) բլիստերում» դեղի *Եվրասիական տնտեսական միության կարգով գրանցում միայն Հայաստանում կիրառման համար* ընթացակարգով գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

12.03.2024

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157